

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի մայիս ամսվա նախադեպի ամփոփում

Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է 2009 թ. հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2009 թ. մայիս ամսվա նախադեպը:

Հաշտարարի գրասենյակը մայիս ամսին ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ քսանինը բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող քսանինը բողոքներից տասնհինգը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են կամ անհատ ձեռներեցներ, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ):

Հաշտարարի քննությանը ենթակա տասնչորս բողոքներից չորսը մայիսին ստացվել են գրավոր տեսքով և ընդունվել են քննության, ութը պահանջների քննությունը Հաշտարարի լիազորությունների շրջանակում են, սակայն հաճախորդները նախապես սահմանված կարգով իրենց բողոք-պահանջները չեն ներկայացրել ֆինանսական կազմակերպությանը: Գրասենյակի աշխատակիցներն օգնել են վերջիններիս ձևակերպել իրենց պահանջները և ուղղել ֆինանսական կազմակերպությանը: Հաշտարարի քննությանը ենթակա տասնչորս բողոքները ներկայացրած հաճախորդներից երկուսը բանավոր դիմել են Հաշտարարի գրասենյակ, որոնց Գրասենյակի աշխատակիցները պարզաբանել են իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև օգնել են շարադրել կազմակերպությանն ուղղված բողոք-պահանջները: Այդ բողոք-պահանջներում նշվել է, որ հաճախորդը պատրաստվում է դիմել Հաշտարարի գրասենյակ: Մրա արդյունքում նշված երկու բողոքները բավարարվել են կազմակերպությունների կողմից՝ առանց Հաշտարարի միջամտության:

2009թ.-ի առաջին եռամսյակում ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	29
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	14
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	8
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա	2
1.3. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ	4
1.3.1 Կապված են վճարահաշվարկային գործարքների (բանկումատով կատարվող	2

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22 , 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: info@fsm.am Web: www.fsm.am

Ֆինանսական համակարգի հաշտարար